ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 21/22

**ք. Եղեգնաձոր** **15 փետրվարի 2022թ.**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ա.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Զեղեայի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ի դեմս Կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Խաչատուրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում) և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանը 1146 «Հանրակրթություն» ծրագրի «12002. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով մարզպետարանը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև 663,200 (վեց հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

1.3 Սույն պայմանագրի գինը կարող է փոխվել ուսումնական տարվա սկզբի դրությամբ տրանսպորտային ծառայությունից օգտվող մանկավարժների և դպրոցահասակ երեխաների փոփոխության հետ կապված:

## *2.Ընթացիկ դրամաշնորհներ տրամադրելու և ծախսելու կարգը*

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի հավելվածում նշված նպատակներին համապատասխան:

2.2. Կազմակերպությունը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի ծրագրով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Մարզպետարանի ներկայացուցչի հնարավորությունը:

2.3. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Կազմակերպությունը սահմանված կարգով ,յուրաքանչյուր ամիս մարզպետարան է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ ամսվա փաստացի հաճախումների մասին;

2.4 Մարզպետարանը նշված հաշվետվությունը ստանալուց հետո յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա փաստացի հաճախումների արդյունքների մասին ստացված տեղեկատվության հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ամենամսյա ֆինանսավորում:

## *3.Հաշվետվությունը*

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## *4.. Այլ դրույթներ*

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը

4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## *5.Կողմերի իրավաբանական հասցեները*

***Նվիրատու***

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
ք. Եղեգնաձոր, Շահումյան- 5
ՀՀ ֆիննախ գործ վարչ
h/h 900351056024
ՀՎՀՀ 08907717
Գլխավոր քարտուղար _____
Ա.Կարապետյան

***Նվիրառու***

Զեղեայի միջն. դպրոց ՊՈԱԿ
ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ.Զեղեա
ՀՀ ֆիննախ գործ վարչ
h/h 900348000028
ՀՎՀՀ 09101884
Տնօրենի ժ/պ՝ _____
Վ.Խաչատուրյան

Հավելված
2022թ. Փետրվարի 15-ին կնքված
N 21/22 պայմանագրի

## Միջոցառումներ

| Իրականացվելիք միջոցառումներ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանումը | Համառոտ բովանդակությունը | Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները | Վերջնաժամկետ | Պահանջվող գումարը (դրամ) |
| | | | | | | |
| 1 | Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում | Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և աշակերտների տրնասպորտային ծախսերի փոխհատուցման ապահովում | 4 մանկավարժների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում | Դասապրոցեսը պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով ուսուցիչների և աշակերտների ներկայության ապահովում դպրոցում | 30.12.2022թ | 663,200 |
| | | | աշակերտների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում | | | |
| **Ընդամենը** | | | | | **663,200** | |

*Նվիրատու*

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
ք. Եղեգնաձոր, Շահումյան- 5
ՀՀ ֆիննախ գործ վարչ
հ/հ 900351056024
ՀՎՀՀ 08907717
Գլխավոր քարտուղար
Ա.Կարապետյան

*Նվիրառու*

Ջեղեայի միջն. դպրոց ՊՈԱԿ
ՀՀ Վայոց Ձորի մարզ, գ. Ջեղեա
ՀՀ ֆիննախ գործ վարչ
հ/հ 900348000028
ՀՎՀՀ 09101884
Տնօրենի ժ/ա՝
Վ.Խաչատուրյան